ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ, Հեռ. 560360, foi@foi.am
www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, 0010, Republic of Armenia

23.04.2012թ.

«Երևան ջուր» ՓԲԸ-ի գլխավոր
167-ի 3 տնօրեն Գոռ Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Գրիգորյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին են դիմել Երեւան քաղաքի Դավթաշեն 4-րդ թաղամասի 26 շենքի բնակիչները՝ տեղեկացնելով, որ արդեն մեկ տարի է, ինչ շենքի մուտքի մոտ գտնվող կոյուղու դիտահորը գտնվում է վթարային վիճակում: Այդ մասին բազմիցս դիմել են շենքի համատիրությանը եւ Երեւան ջուր ՓԲԸ-ին /1-85 հեռախոսահամարով/, սակայն խնդիրը վերջնականապես չի լուծվել:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կազմակերպության ենթակայության տակ է գտնվում արդյոք Դավթաշեն 4-րդ թաղամասի 26 շենքի կոյուղու հորատարերը:
2. Եթե այո, ապա խնդրում ենք անհապաղ միջոցներ ձեռնարկել նշված խնդիրը լուծելու համար:
3. Եթե ոչ, ապա խնդրում ենք տեղեկացնել, թե որ կազմակերպության ենթակայության տակ են գտնվում նշյալ շենքի հորատարերը եւ ի՞նչ միջոցներ պետք է բնակիչները ձեռնարկեն կամ ո՞ւմ դիմեն՝ նշված խնդիրը լուծելու համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքներով՝
Անահիտ Քոչարյան
Հանրային կապերի պատասխանատու